ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 43

«26» 04 2021 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻՆ ԱՌԸՆԹԵՐ ԷԹԻԿԱՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի անդամների անդամության ժամկետի լրանալու հանգամանքով պայմանավորված ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի անդամների ընտրության նպատակով 26.04.2021թ. հրավիրված նիստի արձանագրությունը, ինչպես նաև Դ.Մելքոնյանին և Գ.Մանուկյանին ՀՀ գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի անդամ նշանակելու մասին ՀՀ գլխավոր դատախազի՝ համապատասխանաբար 04.09.2020թ. N 103 և 29.12.2020թ. N 145 հրամանները, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ և 11-րդ կետերով, 23-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ-իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովի հետևյալ կազմը՝ 3 տարի ժամկետով՝

Հանձնաժողովի նախագահ՝

Հայկ Ջիվանի Ասլանյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալ

Հանձնաժողովի անդամներ՝

Վաղինակ Հրաչիկի Ջանազյան - Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության կոռուպցիոն հանցագործությունների գործերով վարչության պետ

Արթուր Սամվելի Չախոյան -	Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությունում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության պետ
Գարեգին Ժորայի Մանուկյան -	Երեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների դատախազ
Դավիթ Մանուկի Մելքոնյան -	ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի դոցենտ, իրավաբանական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ)
Էդգար Էդուարդի Շաթիրյան -	ՀՀ սահմանադրական դատարանի դատավոր, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ (համաձայնությամբ)
Էդուարդ Գագիկի Մելքոնյան -	Իրավաբանական գիտությունների թեկնածու (համաձայնությամբ):

2. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազին առընթեր էթիկայի հանձնաժողովում Դավիթ Մանուկի Մելքոնյանի անդամության ժամկետը հաշվարկել՝ սկսած 2020 թվականի սեպտեմբերի 4-ից, իսկ Գարեգին Ժորայի Մանուկյանի անդամության ժամկետը՝ սկսած 2020 թվականի դեկտեմբերի 29-ից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է ՀՀ գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին ու դատախազին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին և օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ